# Հովհաննես Թումանյան

## Ավերակում

Մոլոր, մենակ ես շրջում եմ
Ավերակում հայրենի,
Աչք եմ ածում ու հիշում եմ
Անցած կյանքը վաղեմի:

Է՛, այստեղ էլ ժամանակով
Շեն ու կենդան է եղել,
Ուրիշ օրով, ուրիշ կյանքով,
Ուրիշ մարդիկ են ապրել:

Ահա նըրանց տեղ-տըները

Լուռ-լուռ փոսեր ցիրուցան,
Ահա նըրանց շիրիմները,
Մամոտ, անշուք, աննըշան
Ահա մեծի ապարանքը
Ու ամրոցը կիսավեր,

Ահա նըրանց խաղաղ վանքը,
Աղոթում է կարծես դեռ...

Մթընշաղը գետինն առել,
Լուռ է աշխարհք-արարած.

Բեկորներին աչքերս հառել

Մրտածում եմ շրվարած:
Հին դարերի մրշուշի մեջ
Նրշմարում եմ ես ահա
Փարթամ քաղաք, տներ անվերջ...
Մեծ պալատներ... ու սրրահ...

Ու սրրահը ճոխ զարդարված
Վառվում է ուշ գիշերով...
Էն սրրահում, լուսավորված
Բյուրեղյա թանկ ջահերով՝
Հայրենիքի ազատանին

Հավաքվել է խրնջույքի,
Տոն է տոնում, տո՛ն հաղթության
Իր հավատի ու զենքի...

Ու փափկասուն տիկինները
Հանդիսավոր ընթացքով

Ճեմ են առնում, աչք են ածում,
Սեր են թափում հայացքով:
Պարիկները պար են պարում
Ու դոփում են համարձակ,
Ու թրնդում են մեծ սրրահում

Երգ ու նրվագ ներդաշնակ...

«Վո՛ւյ...», «վո՛ւյ...», բուն էր, վայեց ահա...
Մութն է: Ու ես գրլխիկոր
Էն ավերակ քաղքի վրրա

Կանգնած, ինչպես մի բեկոր...

1909